



[idcarmenia@gmail.com](mailto:idcarmenia@gmail.com)

<http://www.idcarmenia.am>

---

Մեպտեմբերի 13, 2016թ.

## ԿԱՐԾԻՔ

**2016թ. օգոստոսի 7-ին Մեդիալաբ լրատվական կայքի «Չարգելված» խորագրով քաղաքական ծաղրանկարների և շապիկների գողության կապակցությամբ**

Սույն թվականի օգոստոսի 7-ին Մեդիալաբ ([www.medialab.am](http://www.medialab.am)) լրատվական կայքի աշխատակազմը անցկացրել է «Չարգելված» խորագրով քաղաքական ծաղրանկարների բացօթյա ցուցահանդես Երևան քաղաքի Մաշտոցի պուրակում: Մինչ այդ նման ցուցահանդեսներ անցկացվել են Վանաձորում և Գյումրիում:

Ի սկզբանե նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել ցուցահանդեսն անցկացնել փակ տարածքում մեկ շաբաթ ժամկետով, սակայն տարածքի սեփականատերը մերժել է տրամադրել տարածքը այն բանից հետո, երբ տեղեկացել է միջոցառման բնույթի մասին: Մինչև այդ այլ փակ տարածքների սեփականատերեր նույնպես հրաժարվել են վարձակալությամբ տրամադրել տարածքներ: Կազմակերպությունը ստիպված է եղել ցուցահանդեսը անցկացնել բացօթյա տարածքում՝ Մաշտոցի պուրակում: Ցուցադրվել են քաղաքական թեմաներով ծաղրանկարներ, ինչպես նաև ծաղրանկարներով շապիկներ որոնք ամրացվել էին պարաններին, իսկ ոմանք էլ շապիկները հագել ու շրջել են պուրակում (<http://galatv.am/hy/news/160314/>):

Ցուցահանդեսի ավարտից հետո, գիշերը անհայտ անձինք կոտրել են «Մեդիալաբ» կայքի տնօրենի մեքենայի հետնապակին և գողացել բոլոր ծարանկարները և շապիկները: Դեպքի վերաբերյալ ցուցահանդեսի կազմակերպիչները ներկայացրել են հանցագործության մասին հաղորդում ոստիկանության համապատասխան բաժին:

Իր թիվ 31 որոշման մեջ Խորհուրդն արդեն անդրադարձել է ծաղրանկարչությանը որպես երգիծանքի տեսակ, իսկ վերջինիս՝ գեղարվեստական, ինչպես նաև սոցիալական արտահայտչամիջոց հանդիսանալու հանգամանքին, որն իրեն բնորոշ բոլոր չափազանցություններով, իրականությունը աղավաղելու, հրահրելու ու սուր քննադատության ենթարկելու հատկանիշներով գտնվում է արտահայտվելու ազատության

իրավունքի լայն պաշտպանության տակ:<sup>1</sup> Պաշտպանության շրջանակները հատկապես լայն են, եթե ծաղրանկարները ներկայացվում են մամուլի միջոցով, ինչպես նաև, եթե դրանք վերաբերում են քաղաքական գործիչներին, քաղաքական դեպքերին ու իրադարձություններին: Այս առումով ծաղրանկարների ցուցահանդեսը գտնվում է պետական մարմինների պաշտպանության տակ և իրավասու պետական մարմինները, բացի հանրային կարգ ու կանոնը պահպանելու ընդհանուր պարտականությունից, կրում են նաև **լրացուցիչ** պարտականություն ապահովելու համար ցուցահանդեսի կայացումը առանց որևէ միջամտության: Ծաղրանկարների և շապիկների գողությունը գույքը փչացնելու եղանակով միջամտություն է ծաղրանկարների հեղինակների և ցուցահանդեսի կազմակերպիչների արտահայտվելու ազատության իրավունքին՝ նույնիսկ եթե միջամտությունը տեղի է ունեցել ցուցահանդեսի ավարտից հետո:

Անկասկած է, որ ծաղրանկարների և շապիկների գողությունը գույք հափշտակելու նպատակով չի կատարվել: Իրավապահ մարմինները սույն իրավախախտումը պետք է հետաքննեն ոչ միայն որպես գողության սովորական դեպք, որն ուղեկցվել է ուրիշի գույքը վնասելու եղանակով, այլ որպես հնարավոր **քաղաքական դրդապատճառներով** կատարված հանցագործություն: Իրավասու պետական մարմինները պարտավոր են ոչ միայն բացահայտել իրավախախտ(ներ)ին, այլ նաև պարզել, թե արդյոք հանցագործությունը կատարվել է քաղաքական անհանդուրժողականության շարժառիթով: Հակառակ դեպքում, նույնիսկ իրավախախտի բացահայտման դեպքում, հնարավոր չի լինի պնդել, որ պետական մարմինները կատարել են ազատ խոսքի դեմ ուղղված ոտնձգությունը բացահայտելու իրենց պոզիտիվ պարտականությունը:

*«Այս կարծիքը պատրաստվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ Խոսքի ազատության ոլորտում վեճերի արտադատական լուծումների խթանումը Հայաստանում ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետներն ու հետևությունները հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտացոլեն ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետները»:*

### **Տեղեկատվական վեճերի խորհուրդ**

**Արա Ղազարյան** - «Արնի Քնսայթ» փաստաբանական գրասենյակի փոխսնօրեն

**Մանանա Ասլամազյան** - անկախ մեդիափորձագետ

**Բորիս Նավասարդյան** - Երևանի մամուլի ակումբի նախագահ

**Արամ Աբրահամյան** - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

**Փեղամ Վարդանյան** - Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի պրոդյուսեր

<sup>1</sup> Vereinigung Bildender Künstler-ն ընդդեմ Ավստրիայի, թիվ 68354/01, 25/01/2007թ., §33: